2021

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 3
1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 4
2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 7
3. ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ..... 18
4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ..... 19
5. ՀՖԿՍՊԻ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ/ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 20
6. ՀՖԿՍՊԻ-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ..... 25
7. ՀՖԿՍՊԻ-Ի ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑ-ՎԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 26
8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 29
9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 32
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ ..... 34

# 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) կանոնադրության, «Մասնագիտության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի» հիման վրա ՀՖԿՍՊԻ հիմնադրամը 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում անց է կացրել հարցում ներքին շահակիցներ հանդիսացող ուսանողների շրջանում:

Հարցման նպատակն է՝ բացահայտել ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի և կրթական գործընթացն ուղեկցող օղակներում առկա հիմնական խնդիրները և ուսանողների բավարարվածության աստիճանը ինստիտուտի ստորաբաժանումների աշխատանքներից, ինստիտուտի տրամադրվող ռեսուրսներից, ինչպես նաև տեղեկատվական և օժանդակ ծառայություններից:

Հարցման խնդիրներն են՝

1) Վերհանել և գնահատել ուսանողների կարիքները՝ իրականացնելով բացահայտված կարիքների հիման վրա բարելավման կոնկրետ գործողություններ,
2) Բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը ուսանողների և աշխատակիցների արդյունավետ գործունեության համար,
3) Աջակցել որակի ներքին համակարգի բարելավմանը, ուժեղացնել այդ գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածության և նրանց հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:

Համաձայն վերը նշված կանոնակարգի, ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ ՈԱԲ) սույն հարցման արդյունքները ներկայացնում է համապատասխան ստորաբաժանումներին և նրանց հետ քննարկում հետազոտական տվյալների հիման վրա արված եզրակացություններն ու առաջարկությունները:

Հարցման արդյունքներն օգտագործվելու են ռազմավարական նոր ծրագրի, այդ թվում մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ուսումնական, կրթական ու գիտական գործունեության և նյութատեխնիկական պայմանները բարելավելու համար:

Ուսանողական համակազմի հետ անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունը քննարկվելու են նաև ֆակուլտետների խորհրդում՝ դեկանների ներկայացմամբ:

Հարցման արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրական տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

## 1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողների կրթական կարիքների վերհանման և օժանդակ ծառայություններից բավարարվածության հարցումն անցկացվել է Որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ ՈԱԲ): Վերջինս անցկացվել է առցանց տարբերակով՝ Google forms հարթակի օգնությամբ:

Հարցումներն անցկացվել են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ներքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման հարցումների անցկացման և արդյունքների օգտագործման կանոնակարգին կից ներկայացված հարցաթերթերով (տես՝ Հավելված 1): Հարցումն անցկացվել է անանունության սկզբունքով:

Հարցաթերթն ունի կարծիքների և առաջարկությունների բաժին, որի արդյունքները մշակվել և ներկայացվում են ընդհանրացված առաջարկությունների տեսքով: Հարցման տվյալների մշակման և վերլուծության աշխատանքները կատարվել են ՈԱԲ–ի սոցիոլոգի կողմից՝ MS EXCEL ծրագրի միջոցով:

**Հարցմանը մասնակցած ուսանողական կազմի ընդհանուր նկարագիրը**

Հարցմանը մասնակցել է 371 ուսանող՝ ըստ պատահականորեն ընտրված ցանկի:

**Գծապատկեր 1. Հարցվողների կրթական աստիճանը**




**Գծապատկեր 2. Հարցվողների կուրսը**




Ինչպես երևում է գծապատկեր 1 և 2-ից, հարցվողների 95%-ը բակալավրի ուսանողներ են, իսկ 5%-ը՝ մագիստրատուրայի, հարցվածները գրեթե հավասար քանակությամբ են ներկայացված 1-ից 4-րդ կուրսերում, բացառությամբ 5-րդ կուրսի ուսանողների, որոնք կազմում են հարցվողների ընդհանուր թվի 3.4%-ը:

Հարցվածների 64,4%-ը արական սեռի են, 35%-ը՝ իգական, իսկ ըստ տարիքի հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 64%-ը 18-21 տարիքային խմբում են (տես՝ գծապատկերներ 3 և 4):

**Գծապատկեր 3. Հարցվողների սեռը**




**Գծապատկեր 4. Հարցվողների տարիքը**




Հարցվողների սեռատարիքային կազմը (բացարձակ թվերով) ներկայացված է Գծապատկեր 5-ում:

**Գծապատկեր 5. Հարցվողների սեռատարիքային կազմը**




Հարցվողների գրեթը կեսը ներկայացնում են Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետը, իսկ մյուս կեսը՝ Մարզչամանկավարժական ֆակուլտետը:

**Գծապատկեր 6. Հարցվողների ֆակուլտետը**



Ինչ վերաբերում է հարցմանը մասնակցած ուսանողների ներկայացրած ամբիոններին, ապա այստեղ թվով գերակշռում են Ֆիզիկական վերականգնման ամբիոնի ուսանողները (25.1%), որոնց հետևում են Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի (14%), Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի (10.5%), Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի (9.4%) և մյուս ամբիոնների ուսանողները:

**Գծապատկեր 7. Հարցվողների ամբիոնը**




Հարկ է նկատել, որ հարցվողների 7.5%-ը չի նշել իրենց ամբիոնը: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ նման երկար հարցաթերթով (շուրջ 10 A4 էջ) առցանց հարցման համար Google forms հարթակում չի միացվել "required" (պարտադիր լրացնելու) տիպի հարցերի տարբերակը՝ հնարավորինս մեծ/ներկայացուցչական քանակի պատասխանողների թիվ ապահովելու համար:

Ինչպես երևում է, որ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (31%) ապագա կինեզիոլոգներ են, որոնց հաջորդում են փրկարարները և սպորտային մասնագիտություններ ներկայացնող այլ ուսանողներ:

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

***2.1. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն Ձեր իրավունքների ու պարտականությունների մասին:***

**Գծապատկեր 8.**




Հարցվողների 63%-ը լիովին, իսկ 31%-ը՝ մասամբ տեղեկացված է իրենց (ուսանողների) **իրավունքների** մասին: Ընդամենը 5%-ն է նշել, որ տեղեկացված չի այդ մասին:

Իրենց **պարտականությունների** մասին տեղեկացվածության հարցի վերաբերյալ հարցվողների 89%-ից պատասխան չի ստացվել այն պատճառով, որ այս հարցը առցանց հարցման ընթացքում (ուշ) է ավելացվել: Ընդամենը 40 ուսանող է պատասխանել այս հարցին, որոնցից 23-ը (58%) նշել է, որ իրենց տրամադրվել է տեղեկատվություն իրենց պարտականությունների մասին, իսկ 17-ը (42%) նշել է, որ «մասամբ» է տրամադրվել այդպիսի տեղեկատվություն:

***2.2. Ո՞ւմ կողմից է տրամադրվել իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկությունները:***

**Գծապատկեր 9.**




Ինչպես երևում է գծապատկեր 9-ից, ուսանողների գերակշիռ մեծամասնությունը (57.4%) իրենց իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկություններ

ստանում են իրենց դասախոսներից, ապա՝ ամբիոնի վարիչներից (31.8%), ֆակուլտետի դեկաններից (26.1%), կուրսի խորհրդատուներից, և այլ աղբյուրներից:

***2.3. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ԲՈՒՀ-ում առկա զեղչման կարգի և ուսումնական վարձի զեղչման իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ:***

**Գծապատկեր 10.**




***2.3.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը ԲՈՒՀ-ում առկա զեղչման կարգի և ուսումնական վարձի զեղչման իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ, և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:***

**Գծապատկեր 11.** ***Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը:***




Գծապատկեր 11-ից երևում է, որ ուսանողների 18%-ը բուհում առկա զեղչման կարգի և ուսումնական վարձի զեղչման իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկություններ ստանում են իրենց ֆակուլտետի դեկանից, 16%-

ը՝ դասախոսներից, 12%-ը՝ կուրսի խորհրդատուներից, 10%-ը՝ ինստիտուտի ֆեյսբուքյան էջից, և այլն: Ինչպես երևում է գծապատկեր 12-ից, ուսանողները հիմնականում գոհ են այդ տեղեկատվությունից:

**Գծապատկեր 12.** ***Գոհացրե՞լ է տրամադրված տեղեկատվությունը:***




***2.4. Ձեզ բավարարո՞ւմ են բուհում առկա զեղչերին, զեղչման կարգին և զեղչման համար դիմելու առնչությամբ տրամադրված տեղեկատվությունը:***
**Գծապատկեր 13.**




***2.5. Ձեզ գոհացնո՞ւմ է զեղչերի համար դիմելու նոր պայմանները և ընթացակարգը:***
**Գծապատկեր 14.**




Հարցվողների գրեթե կեսին գոհացնում է զեղչերի համար դիմելու նոր պայմանները և ընթացակարգը, 17.8%-ին մասամբ է այն գոհացնում, 14.3%-ին չի գոհացնում:

***2.6. Ձեզ տրամադրվե՞լ է մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն) մեկնաբանմանն առնչվող տեղեկատվություն:***

**Գծապատկեր 15.**




Մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն) վերաբերյալ տեղեկատվություն ստացել է հարցված ուսանողների 47.2%-ը միայն: 36.1%-ը նշել է, որ չի ստացել նման տեղեկատվություն, ինչը բավականին մտահոգիչ է:

***2.6.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել մասնագիտության կրթական ծրագրի մեկնաբանմանն առնչվող տեղեկատվությունը և գոհացրե՞լ է այդ տեղեկատվությունը:***

**Գծապատկեր 16.** ***Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը:***



Ինչպես երևում է գծապատկեր 16-ից, մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն) վերաբերյալ տեղեկատվություն ուսանողները հիմնականում ստանում են ամբիոնի վարիչներից, դասախոսներից, կուրսի խորհրդատուներից և ֆակուլտետի դեկաններից, և գրեթե բոլորը գոհ են ստացած տեղեկատվությունից (տես գծապատկեր 17):

**Գծապատկեր 17.** ***Գոհացրե՞լ է տրամադրված տեղեկատվությունը:***




Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (84.1%) նշել է, որ իրենց տրամադրվել է տեղեկատվություն ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգի և ձևերի վերաբերյալ (տես գծապատկեր 18):

***2.7. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգի և ձևերի վերաբերյալ:***

**Գծապատկեր 18.**




ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգի և ձևերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողները նույնպես հիմնականում ստանում են ամբիոնի վարիչներից, դասախոսներից, կուրսի խորհրդատուներից և ֆակուլտետի դեկաններից

(տես գծապատկեր 19), և հարցվողների 90%-ից ավելին գոհ է ստացած տեղեկատվությունից (տես գծապատկեր 20):

### *2.7.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:*

**Գծապատկեր 19.**




**Գծապատկեր 20.** ***Գոհացրե՞լ է տրամադրված տեղեկատվությունը:***



***2.8. Ձեզ բավարարե՞լ է քննությունների բողոքարկման կարգին առնչվող տեղեկատվությունը:***
**Գծապատկեր 21.**




Քննությունների բողոքարկման կարգին առնչվող տեղեկատվություն չունեն կամ վերջինիս չեն առնչվել հարցվողների մեծամասնությունը (65%): 28.8%-ը նշել է, որ իրենց բավարարում է այդ տեղեկատվությունը և միայն 5.4%-ին չի բավարարում այն:

Ինչպես երևում է գծապատկեր 22-ից, քննական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն ստացել է հարցվողների 72%-ը: Այս տեղեկատվությունը ուսանողները նույնպես հիմնականում ստանում են դասախոսներից, ամբիոնի վարիչներից, կուրսի խորհրդատուներից և ֆակուլտետի դեկաններից (տես գծապատկեր 23) և գրեթե բոլորը նշել են, որ իրենց գոհացրել է ստացված տեղեկատվությունը (գծապատկեր 24):

***2.9. Ձեզ տրամադրվե՞լ է քննական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն:***
**Գծապատկեր 22.**



***2.9.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:***

**Գծապատկեր 23.** ***Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը:***




**Գծապատկեր 24.** ***Գոհացրե՞լ է տրամադրված տեղեկատվությունը:***



Ինչպես երևում է 25-ից 27-րդ գծապատկերներում, դասընթացների ամփոփիչ քննությունների հարցաշարերին առնչվող տեղեկատվություն ստացել է ուսանողների գրեթե 68%-ը (29.6%-ը չի ստացել, որը մտահոգիչ է): Այս տեղեկատվությունը ուսանողները հիմնականում ստացել են դասախոսներից, ֆակուլտետի դեկաններից, կուրսի խորհրդատուներից, ֆեյսբուքյան էջից, և այլ անձանցից ու բաժիններից: Գրեթե բոլորին գոհացրել է ստացած տեղեկատվությունը (տես գծապատկեր 27):

***2.10. Ձեզ տրամադրվե՞լ է դասընթացների ամփոփիչ քննությունների հարցաշարերին առնչվող տեղեկատվություն***

**Գծապատկեր 25.**




***2.10.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:***

**Գծապատկեր 26.**



**Գծապատկեր 27.** ***Գոհացրե՞լ է տրամադրված տեղեկատվությունը:***




Կրթական ծրագրի մեկնաբանմանն առնչվող տեղեկատվությունը բավարարել է հարցվողների 43.7%-ին, մասամբ է բավարարել 46.1%-ին, և չի բավարարել 5.7%-ին (տես գծապատկեր 28):

***2.11. Ձեզ բավարարե՞լ է կրթական ծրագրի մեկնաբանմանն առնչվող տեղեկատվությունը:***

**Գծապատկեր 28.**




Հարցված ուսանողների միայն 37%-ն է տեղյակ, որ ԲՈՒՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ): Մոտ 21%-ը նշել է, որ մասամբ է տեղյակ ՈՒԳԸ-ի մասին, իսկ 38.3%-ը՝ ընդհանրապես տեղյակ չէ: Գծապատկեր 30-ում երևում է, որ հարցվածների մոտ 55%-ը գոհ է ՈՒԳԸ-ի կատարած աշխատանքից:

***2.12. Տեղյա՞կ եք, որ ԲՈՒՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ):***

**Գծապատկեր 29.**




***2.13. Գո՞հ եք ՈՒԳԸ կատարած աշխատանքից:***

**Գծապատկեր 30.**




***2.14. Հանդիսանու՞մ եք ուսանողական գիտական ընկերության անդամ:***

**Գծապատկեր 31.**




Գծապատկեր 31-ում երևում է, որ ուսանողների միայն 15%-ն է հանդիսանում ՈՒԳԸ անդամ, իսկ 14%-ը նույնիսկ չգիտի, թե դա ինչպիսի կառույց է: Այս փաստը վկայում է այն մասին, որ բուհի կողմից մատուցվող ծառայությունների և օժանդակ կառույցների վերաբերյալ ուսանողներին շարունակական իրազեկման կարիք կա:

**Գծապատկեր 32.**




Գծապատկեր 32-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսանողները ԲՈՒՀ-ում առկա ռեսուրսներից առավելագույն գնահատական են տվել ինստիտուտի ջեռուցման համակարգին, ընթերցասրահների կահավորվածությանը, շենքային պայմաններին և ինստիտուտի էլեկտրոնային կայքի տեղեկատվական հագեցվածությունը (հարցվածների 77%-ից 80%-ը «լավ» կամ «գերազանց» է գնահատել նշված ռեսուրսներին): Համեմատաբար ցածր գնահատականներ են ստացել բուհում *ինտերնետից օգտվելու հնարավորությունը, սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակը, մարզադահլիճների*

*գույքային պայմանները, մերսման լսարանը և լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը* (հարցվածների 23%-ից 38%-ը «անբավարար» կամ «բավարար» է գնահատել վերջիններիս):

## 4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Գծապատկեր 33.**




Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ գծապատկեր 33-ում թվարկված ինստիտուտի ստորաբաժանումների/կառույցների մատուցած ծառայություններից ուսանողների կողմից համեմատաբար մեծ գոհունակություն են վայելում ինստիտուտի ամբիոնները և ֆակուլտետները («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 72%-ից 75%-ի կողմից), Որակի ապահովման բաժինը, Ուսումնագիտական բաժինը և Ուսանողական խորհուրդը («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 65%-ից 67%-ի կողմից): Հարցվողների գրեթե 1/3-ը դժվարացել է գնահատել <<Ֆիմա>>

մարզական ակումբի աշխատանքը, որն ըստ երևույթին կապված է այն հանգամանքի հետ, որ ոչ բոլորն են առնչվել այդ ակումբի աշխատանքի հետ:

## 5. ՀՖԿՍՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ/ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Գծապատկեր 34.**




ՀՖԿՍՊԻ-ի ուսումնաօժանդակ մի շարք ծառայությունների վերաբերյալ կարծիք չեն արտահայտել բավականին մեծ թվով հարցվողներ (13%-ից 54%-ը), որը հավանաբար կապված է այդ ծառայությունների վերաբերյալ ցածր տեղեկացվածության հետ (լրացուցիչ հետազոտման կարիք ունի այս հարցը):

Հարցվողների նշել են, որ «միանշանակ գոհ են» հետևյալ ուսումնաօժանդակ ծառայություններից.

- Դիմումների ընդունման համակարգ – 44%,
- Բնութագրերի տրամադրում - 40%,
- Լրացուցիչ խորհրդատվության տրամադրում՝ անհատական հանդիպում ուսանողի հետ - 40%,
- Տեղեկանքների տրամադրում - 39%, և այլն:

Այստեղ հարկ է մեջբերել մի ուսանողի կողմից արված հետևյալ մեկնաբանությունը.

*«Պետք է լինի մեկ միասնական հարթակ, որտեղ ուսանողը կկարողանա սովորել, լսել, գնահատվել, տեսնել դասախոսությունները (ֆայլերով ), կցել տարբեր բեռնվածության վիդեո հոլովակներ, ուղարկել ռեֆերատներ, միանալ լսարան: Այժմ ոնց պատահի վիճակ է՝ Viber, WhatAapp, mail, Messenger, Օդնոկլասնիկի…»:*

Վերջինս ենթադրում է, որ կարիք կա Google Classroom-ի տիպի հարթակի լայն կիրառմանը ուսումնական գործընթացներում:

Ինչպես երևում է գծապատկեր 35-ում, ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների գրեթե կեսն է օգտվում ինստիտուտի ընթերցասրահից: Սույն զեկույցի 10-րդ հարցից պարզ է դառնում, որ ՀՖԿՍՊԻ ընթերցասրահի հետ կապված ուսանողների դժգոհությունների հիմնական պատճառը ընթերցասրահի փոքր չափերն են, լուսավորվածության և պատշաճ կահավորանքի պակասը:

***6. Օգտվում  ե՞ք արդյոք ՀՖԿՍՊԻ-ի ընթերցասրահից:***

**Գծապատկեր 35.**

***7. Օգտվու՞մ եք ՀՖԿՍՊԻ-ի գրադարանից:***

**Գծապատկեր 36.**




Ըստ այս հարցման, ՀՖԿՍՊԻ-ի գրադարանից պարբերաբար օգտվում է ուսանողների գրեթե ¾-ը: 10-րդ հարցի պատասխաններից պարզ է դառնում, որ ՀՖԿՍՊԻ-ի գրադարանը նույնպես ունի մի շարք թերություններ, ինչպիսիք են համակարգիչներով հագեցվածության պակասը, գրքերի (հատկապես մասնագիտական) քանակության և նոր համալրումների պակասը, ինչպես նաև այնտեղ կարգ ու կանոնին հետևելու ցածր աստիճանը:

Հաջորդ՝ 8-րդ հարցում նշված են այն առարկաները/դասընթացները, որոնց վերաբերյալ ՀՖԿՍՊԻ-ի գրադարանում, ըստ ուսանողների, բացակայում են, կամ քիչ են առավել նոր հրատարակությունները:

***8. Դասընթացներ, որոնք յուրացնելու համար գրադարանում առկա գրքերը շատ հին հրատարակություններ են:***

***Աղյուսակ 1***

| **Առարկա/դասընթաց** | **Պատասխանողների քանակը** |
|---|---|
| Կենսամեխանիկա | 10 |
| Անատոմիա | 9 |
| Ֆիզիոլոգիա | 6 |
| Լող | 4 |
| Աթլետիկա | 3 |
| Համարյա բոլորը | 3 |
| Մանկավարժություն | 3 |
| Մարմնամարզություն | 3 |
| Պատմություն | 3 |
| Վոլեյբոլ | 3 |
| Ֆուտբոլ | 3 |
| Ըմբշամարտ | 2 |
| Հոգեբանություն: | 2 |
| Մասնագիտական գրքեր | 2 |
| ԱՖԿ | 1 |
| Բասկետբոլ | 1 |
| Բուժական ֆիզկուլտուրա | 1 |
| Թենիս | 1 |
| Կինեզիոթերապիա | 1 |
| Կինեզիոլոգիա | 1 |
| Հայոց լեզու | 1 |
| Մարկետինգ | 1 |
| Մերսում | 1 |
| Ռուսաց լեզու | 1 |
| Սպորտի մենեջմենթ | 1 |

*Մեջբերումներ*

- ✓ *«Ընդհանրապես առկա չէ ֆիզիկական թերապիային, կինեզոթերապիայի համար արտասահմանյան գրականություն, ՖԴՏ և մեթոդիկա առարկայից անգլիական, ռուսական հագեցած բազա: Ընդհանրապես գրադարանի աշխատակիցների աշխատանքը գնահատելի է գերազանց, բայց բազայի վիճակը հին է»:*

- ✓ *«Կենսամեխանիկա - օգտվում եմ 1984թ-ին հրատարակված գրքով և գրքի մեծ մասը վնասված է և բան չի հասկացվում»:*

***9. Ձեզ գրամադրվու՞մ է տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) և ինտերնետ հասանելիություն ունեցող լսարան:***

**Գծապատկեր 37.**




Հարցվածների գրեթե կեսն է նշել, որ իրենց տրամադրվում է տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) և ինտերնետ հասանելիություն ունեցող լսարան: Այս հարցը նույնպես կարիք ունի լուծման՝ կապված ժամանակակից ուսումնական պայմաններով ապահովվածության պահանջի հետ: Հարկ է մեջբերել մի ուսանողի կողմից արված հետևյալ դիտողությունը.

*«...Երբեմն լսարանի հետ կապված խնդիր է առաջանում( նախկին 52), իսկ մասնագետը դժկամությամբ է մոտենում և լուծում խնդիրը: Արդյունքում ուսանողն ու դասախոսը ժամանակ են կորցնում և դասապրոցեսը տուժում է»:*

***10. Հարցվողների առաջարկությունները կապված ընթերցասրահի և գրադարանի հետ***

- ✓ *Մեծացնել ընթերցասրահը, լավ կահավորել այն, ավելի լուսավոր դարձնել /4 պատ./*
- ✓ *Ընթերցասրահն ու գրադարանը համապատասխանեցնել եվրոպական/ամերիկյան ստանդարդներին*
- ✓ *Կարելի է ավելի գրավիչ դարձնել այն՝ ավելի հաճելի միջավայրում ուսումնասիրություններ անելու համար*
- ✓ *Համակարգիչներով հագեցնել գրադարանը*
- ✓ *Գրքերի քանակությունը ավելացնել /8 պատ./*
- ✓ *Ժամանակակից, ավելի թարմ գրականություն տրամադրել /7 պատ./*
- ✓ *Մասնագիտական ավելի շատ գրքեր տրամադրել /4 պատ./*
- ✓ *Ավելացնել գեղարվեստական գրականությունը /2 պատ./*
- ✓ *Կցանկանայի լիներ գրքեր Կինեզիոլոգիա առարկայի մասին՝ հայերենով*
- ✓ *Հագեցնել ոչ սպորտային մասնագիտությունների գրականությունը*
- ✓ *Տրամադրել գրքեր ռուսերեն, մարմնամարզություն, անատոմիա առարկաներից*
- ✓ *Քննությունների համար պահանջվող գրքերը բացակայում են*
- ✓ *Ընթերցասրահ պետք է մտնեն միայն այն ուսանողները, որոնք իսկապես որևէ գործ ունեն այնտեղ անելու, ոչ թե ժամանակ են անցկացնում: Դա պետք է վերահսկվի: Ընթերցասրահում առհասարակ պետք է լռություն լինի, բայց շատ հաճախ կարգը խախտում են հենց աշխատողները:*

***11. Ինստիտուտի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ դժգոհություններ երբևէ ունեցե՞լ եք: Ինչպե՞ս եք արտահայտել Ձեր բողոքները և առաջարկությունները:***

**Գծապատկեր 38.**




Գծապատկեր 38-ում երևում է, որ ինստիտուտի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ դժգոհությունները, բողոքներն ու առաջարկությունները ուսանողները հիմնականում հասցեագրում են իրենց դասախոսներին (51%), ամբիոնի վարիչին (20%), դեկանին (9%), ուս.խորհրդին (7%) և այլն:

Նշվել են նաև այսպիսի կարծիքներ.

- ✓ *«...Միանգամից գնալ վերին օղակներ, խնդրել, դիմել, հարցերը միայն այդ ժամանակ են խելամիտ լուծումներ ստանում»:*

- ✓ *«Հեռակայի ուսանողները անտեսվում են բոլոր առումներով»:*

## 6. ՀՖԿՍՊԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

***12. Ինչպե՞ս են ուսանողները տեղեկանում ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին:***

**Գծապատկեր 39.**




Ի տարբերություն սույն զեկույցի 2-րդ գլխում նշված տեղեկատվության աղբյուրների, ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին ուսանողների տեղեկատվության առաջնային աղբյուրներն են ինստիտուտի ֆեսբուքյան էջը (49%), ինստիտուտի պաշտոնական կայքը (43%), ԲՈՒՀ-ում փակցված հայտարարությունները (25%) և այլն (տես գծապատկեր 39):

***13. Ո՞ր բարեփոխումներն են տեսանելի ուսանողների համար***

Հարկ է նկատել, որ հարցվողների 69%-ը (256 ուսանող) այս հարցին չի պատասխանել: Մնացած 31%-ի (115 ուսանող) պատասխանները նշված են գծապատկեր 40-ում: Հարցմանը մասնակցած ուսանողների 11.3%-ը դժվարացել է մատնանշել որևէ բարեփոխում: 5.7%-ը ասել է, որ բոլոր բարեփոխումներն էլ տեսանելի են իրենց համար: 4.9%-ը նշել է, որ իրենց համար տեսանելի է ինստիտուտի վերանորոգումը, կահավորումը, 2.2%-ը՝ կրթական բարեփոխումները, 1.3%-ը՝ նոր, արհեստավարժ դասախոսներով համալրումը, 1.3%-ը՝ տեսախցիկների առկայությունը և այլն:

**Գծապատկեր 40.** ***Բուհի ո՞ր բարեփոխումներն են տեսանելի ուսանողների համար:***



## 7. ՀՖԿՍՊԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱ-ԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

***14. Ձեզ դասավանդող դասախոսները ուսանողներին տրամադրու՞մ են տեղեկություններ իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում են իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):***

**Գծապատկեր 41.**




Հարցվածների գրեթե 66%-ը նշել է, որ դասավանդող դասախոսները տրամադրում են տեղեկություններ իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին (օրինակ՝ իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում են իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):

Հարցվածների 74%-ը չի պատասխանել այն հարցին, թե ինչը կմոտիվացներ իրենց (ուսանողներին) գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար: 9.4%-ը դժվարացել է նշել որևէ բան, 3.5%-ը ասել է՝ «ոչինչ չի մոտիվացնի»:

Դրական պատասխան տվողների մեջ համեմատաբար մեծ թիվ է կազմում (ամբողջի 2.7%-ը) այն ուսանողների թիվը, որոնք նշել են «գործնական աշխատանքները/փորձը», 1.9%-ի համար «լավ, նոր, հետաքրքիր թեման» կարող է խթան հանդիսանալ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար և այլն: (Տես՝ Աղյուսակ 2):

***15. Ի՞նչը կմոտիվացներ Ձեզ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար:***

| **Աղյուսակ 2.** | Թիվը | Տոկոսը |
|---|---|---|
| *Պատասխան չկա* | *274* | *73.9%* |
| *Չգիտեմ* | *35* | *9.4%* |
| *Ոչինչ* | *13* | *3.5%* |
| Գործնական աշխատանքները/փորձը | 10 | 2.7% |
| Լավ/նոր/հետաքրքիր թեման | 7 | 1.9% |
| Նման աշխատանքների մասին տեղեկատվությունը | 5 | 1.3% |
| Առկա դասընթացները | 3 | 0.8% |
| Հետազոտական թիմի առկայությունը, մթնոլորտը | 3 | 0.8% |
| Վառ հեռանկարը և այդ մասին ուսանողներին ինֆորմացիա տալը | 3 | 0.8% |
| Պրակտիկայում կիրառելու հնարավորությունը | 3 | 0.8% |
| Գիտատեխնիկական առաջընթացը | 2 | 0.5% |
| Տվյալ մասնագիտության վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ունենալու ցանկությունը | 2 | 0.5% |
| Երկրի անվտանգությունը | 1 | 0.3% |
| Կորոնավիրուսի ավարտը | 1 | 0.3% |
| Ֆինանսական խրախուսումները | 1 | 0.3% |
| Ելույթներին ներկա գտնվելը | 1 | 0.3% |
| Հետաքրքիր խրախուսումը | 1 | 0.3% |
| *Ներկա պահին մասնակցում եմ գիտահետազոտական աշխատանքներին* | *1* | *0.3%* |
| Սերը աշխատանքի նկատմամբ | 1 | 0.3% |
| Արտասահմանյան համագործակցությունը, կապերը, ուսանողների փոխանակման ծրագրերը | 1 | 0.3% |
| Եթե գիտելիքների բազան մեծացվի ու գործնական շփումներ լինեն, ավելացվեն մասնագիտական առարկաների ժամերը | 1 | 0.3% |
| Դասախոսի բազմակողմանի զարգացվածությունն ու սրտացավությունը | 1 | 0.3% |
| Իմացությունը, գիտելիքը, գաղափարը տվյալ մասնագիտության մասին | 1 | 0.3% |

Հարցման/զեկույցի 16-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության համար առաջնային նշանակություն ունեն նաև ուսանողների մասնակցությունը/ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում (4 ուսանողի կարծիք է), ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների, կոնֆերանսների մասին տեղեկացնելը (ևս 4 ուսանողի կարծիք է), ինչպես նաև գիտահետազոտական ուղղվածությամբ պրակտիկայի և գործնական պարապմունքների անցկացումը, հետազոտական թիմի առկայությունը, դասախոսների կողմից ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և մոտիվացումը, և այլն:

***16. Ուսանողների առաջարկություններն ու դիտողությունները ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության բարելավման ուղղությամբ:***

- ✓ Գիտահետազոտական ուղղվածությամբ պրակտիկայի անցկացում
- ✓ Մասնակցություն/ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում /4/
- ✓ Գործնական պարապմունքների անցկացում
- ✓ Ավելի շատ ուսանողներին ներգրավել պրակտիկ դասերի
- ✓ Առկա ուսուցման անցնելը
- ✓ Մասնագիտական դասընթացների ավելացումը
- ✓ Հետազոտական թիմի առկայությունը
- ✓ Հեռակա ուսանողներին ևս ընդգրկել այդ աշխատանքներում
- ✓ Ուսանողներին տեղեկացնել անցկացվող գիտահետազոտական աշխատանքների, կոնֆերանսների մասին /4/
- ✓ Դասախոսների կողմից գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և մոտիվացում
- ✓ Պարբերաբար ուսանողներին ներգրավել գործընթացին, օրինակ՝ տալ պատրաստի հրատարակությունները, որ կարդան և իրազեկվեն
- ✓ Պետք է խորացնել լեզուների՝ ռուսերեն , անգլերեն ուսուցումը, որը կնպաստի այդ աշխատանքներին ավելի արդյունավետ ներգրավմանը:

Վերջում հարկ է նշել, որ այս հարցումը ուսանողների 79%-ի կարծիքով իրոք հնարավորություն է տվել ուսանողներին արտահայտելու իրենց կարծիքը ինստիտուտի գործունեության վերաբերյալ (Տես՝ Գծապատկեր 42):

***17. Արդյո՞ք հարցումը հնարավորություն տվեց արտահայտելու Ձեր կարծիքը Ինստիտուտի գործունեության վերաբերյալ***

**Գծապատկեր 42.**



## 8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների գերակշիռ մեծամասնությունը տեղեկացված է իրենց իրավունքների և պարտականությունների մասին (դասախոսների, ամբիոնների վարիչների, դեկանների և այլոց միջոցով): Ուսանողների 82%-ը տեղեկացված է ԲՈՒՀ-ում առկա ուսումնական վարձի զեղչման կարգի և այդ իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ընթացակարգից (ֆակուլտետի դեկանի, դասախոսների, կուրսի խորհրդատուների, ինստիտուտի ֆեյսբուքյան էջի և այլ միջոցովներով): Հարցվողների գրեթե կեսին գոհացնում է վերը նշված գործընթացի նոր պայմանները, 18%-ը՝ գոհ է մասամբ է, 14%-ը՝ գոհ չէ:

Մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն) վերաբերյալ տեղեկատվություն ստացել է հարցված ուսանողների միայն 47.7%-ը: 36%-ը նշել է, որ չի ստացել նման տեղեկատվություն, ինչը բավականին մտահոգիչ է:

ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգի և ձևերի հետ կապված հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (84.1%) ստացել է տեղեկատվություն, ըստ որում վերջիններիս 90%-ից ավելին գոհ է ստացված տեղեկատվությունից:

Քննությունների բողոքարկման կարգին առնչվող տեղեկատվությանը ծանոթ չեն կամ վերջինիս առնչություն չեն ունեցել հարցվողների մեծամասնությունը (65%): 28.8%-ը նշել է, որ իրենց բավարարում է հարցի հետ կապված առկա տեղեկատվությունը և միայն 5.4%-ն է մնացել չբավարարված:

Քննական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն ստացել է հարցվողների 72%-ը: Այս տեղեկատվությունը ուսանողները նույնպես հիմնականում ստացել են դասախոսներից, ամբիոնի վարիչներից, կուրսի խորհրդատուներից ու ֆակուլտետի դեկաններից, և գրեթե բոլորը նշել են, որ իրենց գոհացրել է ստացված տեղեկատվությունը:

Դասընթացների ամփոփիչ քննությունների հարցաշարերին առնչվող տեղեկատվություն ստացել է ուսանողների գրեթե 67%-ը (30%-ը՝ չի ստացել, ինչը առնվազն զարմանալի է): Այս տեղեկատվությունը ուսանողները հիմնականում ստացել են դասախոսներից, ֆակուլտետի դեկաններից, կուրսի խորհրդատուներից, ֆեյսբուքյան էջից, և այլ անձանցից ու բաժիններից: Գրեթե բոլորին գոհացրել է ստացված տեղեկատվությունը:

Հարցված ուսանողների միայն 37%-ն է տեղյակ, որ բուհում գործում է Ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ): Վերջինիս կատարած աշխատանքների վերաբերյալ գոհունակություն է արտահայտել հարցվածների մոտ 55%-ը: Ուսանողների 38%-ը նշել է, որ տեղյակ չի, իսկ գրեթե 21%-ը՝ մասամբ է տեղյակ ՈՒԳԸ-ի մասին: Այս փաստը ևս մտահոգիչ է և կարիք ունի հասցեագրման:

Ինչ վերաբերում է բուհում առկա ռեսուրսներին՝ ուսանողները առավելագույն գնահատականը տվել են ինստիտուտի ջեռուցման համակարգին, ընթերցասրահների կահավորվածությանը, և ապա՝ շենքային պայմաններին ու ինստիտուտի էլեկտրոնային կայքի տեղեկատվական հագեցվածությունը (հարցվածների 77%-ից 80%-ը «լավ» կամ «գերազանց» է գնահատել նշված ռեսուսրների առկայությունը): Համեմատաբար ցածր գնահատականների են արժանացել բուհում ինտերնետից օգտվելու հնարավորությունը, սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակը, մարզադահլիճ-ների գույքային պայմանները, մերսման լսարանը և լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը (հարցվածների 23%-ից 38%-ը «անբավարար» կամ «բավարար» է գնահատել վերջիններիս):

Ինստիտուտի ստորաբաժանումների/կառույցների մատուցած ծառայություններից ուսանողների կողմից համեմատաբար մեծ գոհունակություն են վայելում ինստիտուտի ամբիոնների և ֆակուլտետների («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 72-75%-ի կողմից), ապա՝ Որակի ապահովման բաժնի, Ուսումնագիտական բաժնի և Ուսանողական խորհրդի («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 65-67%-ի կողմից) մատուցած ծառայությունները: Հարցվողների գրեթե 1/3-ը դժվարացել է գնահատել <<Ֆիմա>> մարզական ակումբի աշխատանքը, որն, ըստ երևույթին, կապված է այն հանգամանքի հետ, որ ոչ բոլորն են առնչվել այդ ակումբի հետ:

ՀՖԿՍՊԻ-ի ուսումնաօժանդակ մի շարք ծառայությունների վերաբերյալ կարծիք չեն արտահայտել բավականին մեծ թվով հարցվողներ (13%-ից 54%-ը), որը ենթադրաբար կապված է այդ ծառայությունների վերաբերյալ ցածր տեղեկացվածության հետ (այս հարցը կարիք ունի լրացուցիչ հետազոտման):

Պատասխանողների համեմատաբար մեծ թվաքանակը (40%-ից 44%-ը) հայտնել են իրենց գոհունակությունը՝ կապված հետևյալ ուսումնաօժանդակ ծառայությունների հետ. դիմումների ընդունման համակարգ, բնութագրերի տրամադրում, անհատական հանդիպում ուսանողի հետ (որպես լրացուցիչ խորհրդատվության տրամադրում), ինչպես նաև Տեղեկանքների տրամադրում ծառայությունից: Ուսանողները նշել են նաև մեկ միասնական առցանց ուսուցողական հարթակ ունենալու անհրաժեշտության մասին (օրինակ՝ Google Classroom):

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների գրեթե կեսը օգտվում է ինստիտուտի ընթերցասրահից: Ուսանողների դժգոհությունների հիմնական պատճառները ընթերցասրահի փոքր չափերն են, լուսավորվածության և պատշաճ կահավորանքի պակասը, ինչպես նաև օգտվելու կարգ ու կանոնի ոչ պատշաճ պահպանումը: ՀՖԿՍՊԻ-ի գրադարանի հետ կապված նույնպես նշվել են մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ համակարգիչներով հագեցվածության պակասը, գրքերի (հատկապես մասնագիտական) քանակության և նոր հրատարակություններով համալրումների պակասը: Նկատենք, որ ուսանողները նաև առանձնացրել են այն առարկաներն/դասընթացները, որոնց վերաբերյալ ՀՖԿՍՊԻ-ի գրադարանում բացակայում են կամ քիչ են առավել նոր հրատարակությունները: Դրանք

են՝ կենսամեխանիկա, անատոմիա, ֆիզիոլոգիա, ֆիզիկական թերապիա, կինեզոթերապիա, լող, աթլետիկա և այլն:

Հաջորդ հարցը, կապված ժամանակակից ուսումնական պայմաններով ապահովվածության պահանջի հետ, նույնպես արժանի է ուշադրության: Դա տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) և ինտերնետ հասանելիություն ունեցող լսարանների առկայությունն է: Հարցվածների միայն կեսն է նշել նման լսարանների առկայության մասին:

Ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին ուսանողների տեղեկատվության առաջնային աղբյուրներն են ինստիտուտի ֆեյսբուքյան էջը (49%), ինստիտուտի պաշտոնական կայքը (43%), բուհում փակցված հայտարարությունները (25%) և այլն: Ինչ վերաբերում է բուն բարեփոխումներին, ապա հարցվողների մեծամասնությունը հրաժարվել է մատնանշել որևէ բարեփոխում: Պատասխանողների համար հիմնականում տեսանելի են հետևյալ բարեփոխումները՝ ինստիտուտի վերանորոգումը, կահավորումը, կրթական բարեփոխումները, նոր, արհեստավարժ դասախոսներով համալրումը, տեսախցիկների առկայությունը և այլն:

Ինչ վերաբերում է գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ ուսանողների իրազեկմանը, հարկ է նկատել, որ հարցվածների 66%-ը նշել է, որ դասավանդող դասախոսները ուսանողներին տրամադրում են տեղեկություններ իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին (օրինակ՝ դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են կատարած գիտական նորարարությունները, քննարկում են իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):

Հարցվողների 74%-ը չի պատասխանել այն հարցին, թե ինչը կմոտիվացներ իրենց գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար: Նման պատկերի պատճառները վերհանելու համար անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն: Հավելենք, որ 9.4%-ը դժվարացել է նշել որևէ բան, իսկ 3.5%-ը պատասխանել է, որ «ոչինչ չի մոտիվացնի»: Բարեփոխումներ մատնանշողների շարքում համեմատաբար մեծ է այն ուսանողների թիվը, որոնք նշել են, որ գործնական աշխատանքները/փորձը կմոտիվացնի իրենց/ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար (ամբողջի 2.7%-ը): 1.9%-ի համար «լավ, նոր, հետաքրքիր թեման» կարող է խթան հանդիսանալ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար և այլն:

Հարկ է նկատել, որ ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության հարցում վերջիններիս կողմից նշված գիտահետազոտական աշխատանքների, կոնֆերանսների մասին տեղեկացումը/ներգրավումը, ինչպես նաև գիտահետազոտական ուղղվածությամբ պրակտիկայի և գործնական պարապմունքների անցկացումը, հետազոտական թիմի առկայությունը, դասախոսների կողմից ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և մոտիվացումը ոչ պակաս կարևորություն են ներկայացնում հարցի արդյունավետ լուծման համար:

## 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության արդյունքների վերլուծության և խնդիրների վերհանման հիման վրա հարկ ենք համարում կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Իրականացնել մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն), դասընթացների ամփոփիչ քննությունների հարցաշարերի, Ուսանողական գիտական ընկերության և «Ֆիմա» մարզական ակումբի գործունեության, քննությունների բողոքարկման կարգի, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ-ի ուսումնաօժանդակ ծառայությունների վերաբերյալ <u>տեղեկատվության տարածում</u> ուսանողների շրջանում՝ էլ.փոստի, ինստիտուտի ֆեյսբուքյան էջի, պաշտոնական կայքի, դասախոսների, կուրսի խորհրդատուների, դեկանատների, տպագիր հայտարարությունների, ինչպես նաև բաց քննարկումների կազմակերպման միջոցով:

2. Մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքի հավաստման տեսանկյունից նպատակահարմար կլինի անցկացնել պարբերական հանդիպումներ ուսանողների և իրենց ոլորտում կայացած շրջանավարտների հետ: Վերջիններս ներկայացնելով իրենց անցած ուղին, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու փորձը (առկայության դեպքում), ինչպես նաև աշխատանքի հնարավորությունները, կարող են բավականին մեծ ազդեցություն ունենալ ուսանողների կողմնորոշման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների մեկնարկի համար:

3. Ինչ վերաբերում է բուհում առկա ռեսուրսներին՝ հարցումներից պարզ է դարձել, որ անհրաժեշտ է բարելավել անլար (WiFi) ինտերնետ կապի հասանելիությունը՝ հատկապես գրադարանում և ընթերցասրահում: Վերջինիս նպատակը պետք է լինի աջակցել ուսումնական/գիտական ինֆորմացիայի որոնմանը կամ փոխանակմանը՝ բացառելով սոցիալական կամ զվարճանքային կայքերի օգտագործումը: Մարզադահլիճների գույքային պայմանները, սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակը, մերսման լսարանը և լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը նույնպես բարելավման կարիք ունի: Այս առումով նպատակահարմար կլինի նախ և առաջ անցկացնել փորձագիտական հետազոտություն և ապա, ելնելով բուհի ֆինանսական հնարավորություններից, որոշել առաջնահերթությունները:

4. Հաշվի առնելով, որ ըստ հարցման արդյունքների, ինստիտուտի ընթերցասրահը կարիք ունի տեխնիկական վերազինման (ներառյալ անհրաժեշտ քանակի համակարգիչներով), նոր հրատարակություններով համալրման (հատկապես մասնագիտական գրականությունից՝ կենսամեխանիկա, անատոմիա, ֆիզիոլոգիա, ֆիզիկական թերապիա, կինեզոթերապիա և այլն), պատշաճ գույքային

պայմաններով ապահովման, տարածքի ընդլայման, բավարար լուսավորվածության ապահովման, ինչպես նաև ընթերցասրահից օգտվելու պատշաճ կանոնների հաստատման, պարզ է դառնում, որ համապատասխան միջավայրի և մթնոլորտի ձևավորումը կխթանի ինչպես անհատական, այնպես էլ խմբային գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը:

5. Անհրաժեշտ է մեծացնել տեսալսողական սարքավորումներով համալրված (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) և ինտերնետ հասանելիություն ունեցող լսարանների թիվը, ինչը կխթանի ուսանողների առավել ակտիվ ներգրավմանը դասապրոցեսին, որն էլ իր հերթին կնպաստի ուսման արդյունավետության բարձրացմանը:

6. Ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիան մեծացնելու համար նպատակահարմար է ավելի հաճախ զուգակցել տեսությունն ու պրակտիկան, ուսանողների հետ քննարկել նոր/հետաքրքիր գիտական թեմաներ իրենց մասնագիտական ոլորտներից, վերջիններիս տեղեկացնել և ներգրավել զանազան գիտաժողովներում, բանավեճերում, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

### ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող,

ՀՖԿՍՊԻ-ն իրականացնում է հետազոտություն՝ կրթական գործընթացն ուղեկցող օղակներում առկա խնդիրների բացահայտման և շտկման, ինչպես նաև կրթական ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով: Հարցումն անանուն է և Ձեր օբյեկտիվ գնահատականը շատ կարևոր է, քանի որ Դուք, լինելով ՀՖԿՍՊԻ-ի կրթական ծառայությունների սպառողը, լավագույնս կարող եք մեկնաբանել՝ որքանով են բուհի ենթակառուցվածքները և ռեսուրսային ապահովվածությունը բավարարում կրթական վերջնարդյունքների ձեռք բերմանը և աջակցում ուսումնական գործընթացի բարելավմանը:

**1.1.Նշեք Ձեր սեռը**

Արական ☐ Իգական ☐

**1.2.Նշեք Ձեր տարիքը**

*1. 18-21 տ.*
*2. 22-25 տ.*
*3. 26-29 տ.*
*4. 30-33 տ.*
*5. 34-37 տ.*
*6. 37-47 տ.*
*7.Այլ* _____

**1.3. Ֆակուլտետը**

*1. Մարզչամանկավարժական*

*2. Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետ*

**1.4. Նշեք Ձեր ամբիոնը**

*1. Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոն*

*2. Ցիկլիկ մարզաձևերի ամբիոն/աթլետիկա, դահուկ, հեծանիվ/*

*3. Ֆուտբոլի ամբիոն*

*4. Մարզախաղերի ամբիոն*

*5. Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոն*

*6. Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոն*

*7. Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոն*

*8. Ֆիզիկական վերականգնման ամբիոն*

*9. Սպորտի կառավարման և մարքետինգի ամբիոն*

*10. Մարզական լրագրության ամբիոն*

*11. Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոն*

*12. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն*

*13. Հասարակական և հումանիտար գիտությունների, լեզուների ամբիոն*

*14. Բժշկակենսաբանակա*

**1.5. Ձեր կուրսը՝**
*1.***I**
*2.***II**
*3.* **III**
*4.***IV**
*5.***V**

**1.6. Նշեք Ձեր մասնագիտությունը՝**

---

**1.7. Նշեք Ձեր խումբը՝**

---

**1.8.Ձեր կրթական աստիճանը՝**
*1. Բակալավր*
*2.Մագիստրոս*

## 2. ԲԱՎԱՐԱՐՎԱ՞Ծ ԵՔ ԱՐԴՅՈՔ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ

**2.1.Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն Ձեր իրավունքների ու պարտականությունների մասին:**
*1.Այո*
*2.Մասամբ այո*
*3.Մասամբ ոչ*
*4.Ոչ*

2.2.**Ո՞ւմ կողմից են տրամադրվել տեղեկությունները**

*կարող եք նշել մի քանի պատասխան*

- ✓ Ֆակուլտետի դեկանի
- ✓ Ուսումնագիտական բաժնի պետի
- ✓ Որակի ապահովման բաժնի պետի
- ✓ Դասախոսի
- ✓ Կուրսի խորհրդատուի
- ✓ Ուսանողական խորհրդատուի
- ✓ Այլ _____

**2.3. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն բուհում առկա զեղչման կարգի և ուսումնական վարձի զեղչման իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ**

*1.Այո*
*2.Ոչ*

**2.3.1.Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:**

| Ում կողմից | Նշել ում կողմից է տրամադրվել | Գոհացրել է | Չի գոհացրել |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի դեկանի | | | |
| Ամբիոնի վարիչի | | | |
| Դեկանի | | | |
| Կուրսի խորհրդատուի | | | |
| Իրավական ապահովման բաժնի | | | |
| Ուսանողական խորհրդի | | | |
| Որակի ապահովման բաժնի | | | |
| ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքի միջոցով | | | |
| Ֆեյսբուքյան էջի միջոցով | | | |

**2.4.Ձեզ բավարարո՞ւմ են ԲՈՒՀ-ում առկա զեղչերին, զեղչման կարգին և զեղչման համար դիմելու առնչությամբ տրամադրված տեղեկատվությունը:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Չեմ առնչվել*
*4.Այլ*

**2.5. Ձեզ գոհացնո՞ւմ է զեղչերի համար դիմելու նոր պայմանները և ընթացակարգը:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Չեմ առնչվել*
*4.Այլ*

**2.6. Ձեզ տրամադրվել է մասնագիտության կրթական ծրագրի /նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն/ մեկնաբանմանն առնչվող տեղեկատվություն:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Այլ*

**2.6.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:**

| Ում կողմից | Նշել ում կողմից է տրամադրվել | Գոհացրել է | Չի գոհացրել |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի դեկանի | | | |
| Ամբիոնի վարիչի | | | |
| Դեկանի | | | |
| Կուրսի խորհրդատուի | | | |
| Իրավական ապահովման բաժնի | | | |
| Ուսանողական խորհրդի | | | |
| Որակի ապահովման բաժնի | | | |
| ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքի միջոցով | | | |
| Ֆեյսբուքյան էջի միջոցով | | | |

**2.7. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգի և ձևերի վերաբերյալ:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Այլ*

**2.7.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:**

| Ում կողմից | Նշել ում կողմից է տրամադրվել | Գոհացրել է | Չի գոհացրել |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի դեկանի | | | |
| Ամբիոնի վարիչի | | | |
| Դեկանի | | | |
| Կուրսի խորհրդատուի | | | |
| Իրավական ապահովման բաժնի | | | |
| Ուսանողական խորհրդի | | | |
| Որակի ապահովման բաժնի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքի միջոցով | | | |
| Ֆեյսբուքյան էջի միջոցով | | | |

**2.8. Ձեզ բավարարե՞լ է քննությունների բողոքարկման կարգին առնչվող տեղեկատվությունը:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Չեմ առնչվել*
*4.Այլ*

**2.9. Ձեզ տրամադրվե՞լ է քննական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Այլ*

**2.9.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:**

| Ում կողմից | Նշել ում կողմից է տրամադրվել | Գոհացրել է | Չի գոհացրել |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի դեկանի | | | |
| Ամբիոնի վարիչի | | | |
| Դեկանի | | | |
| Կուրսի խորհրդատուի | | | |
| Իրավական ապահովման բաժնի | | | |
| Ուսանողական խորհրդի | | | |
| Որակի ապահովման բաժնի | | | |
| ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքի միջոցով | | | |
| Ֆեյսբուքյան էջի միջոցով | | | |

**2.10.Ձեզ տրամադրվե՞լ է դասընթացների ամփոփիչ քննությունների հարցաշարերին առնչվող տեղեկատվություն**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Այլ*

**2.10.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկությունը և գոհացրե՞լ է տրամադրված տեղեկությունը:**

| Ում կողմից | Նշել ում կողմից է տրամադրվել | Գոհացրել է | Չի գոհացրել |
|---|---|---|---|
| Ֆակուլտետի դեկանի | | | |
| Ամբիոնի վարիչի | | | |
| Դեկանի | | | |
| Կուրսի խորհրդատուի | | | |
| Իրավական ապահովման բաժնի | | | |
| Ուսանողական խորհրդի | | | |
| Որակի ապահովման բաժնի | | | |
| ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական կայքի միջոցով | | | |
| Ֆեյսբուքյան էջի միջոցով | | | |

**2.11. Ձեզ բավարարե՞լ է կրթական ծրագրի մեկնաբանմանն առնչվող տեղեկատվությունը:**

*1.Այո*
*2.Մասամբ այո*
*3.Մասամբ ոչ*
*4.Ոչ*
*5.Այլ*

**2.12. Տեղյա՞կ եք, որ ԲՈՒՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն՝ (ՈՒԳԸ):**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Մասամբ*
*4.Այլ*

**2.13. Գո՞հ եք ՈՒԳԸ կատարած աշխատանքից:**

*1.Այո*
*2.Ոչ*
*3.Մասամբ*
*4.Այլ*

**2.14. Հանդիսանու՞մ եք ուսանողական գիտական ընկերության անդամ:**

*1.Այո*
*2.Ոչ*

*3.Չգիտեմ դա ինչ է*

## 3. ԳՆԱՀԱՏԵՔ ԽՆԴՐԵՄ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

| Գնահատել 1-4 սանդղակով, որտեղ 1-ը՝ անբավարար, 2-ը՝ բավարար, 3-ը՝ լավ, 4-ը՝գերազանց, 99 դժվարանում եմ պատասխանել: | **1** | **2** | **3** | **4** | **99** |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| 1. Շենքային պայմանները | | | | | |
| 2. Ջեռուցումը | | | | | |
| 3. Սանհանգույցները | | | | | |
| 4.Լսարանների կահավորվածությունը | | | | | |
| 5.Լսարանների տեխնիկական ապահովվածությունը | | | | | |
| **6.** Մարզադահլիճների անհրաժեշտ պայմաններ | | | | | |
| 7.Լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը | | | | | |
| 8.Համակարգչային լսարանների թիվը և համակարգիչների որակը | | | | | |
| 9.Ընթերցասրահների կահավորվածությունը | | | | | |
| 10.Գրադարանում ուսումնառության համար անհրաժեշտ գրքերի առկայությունը | | | | | |
| 11.Գրադարանում ուսումնառության համար անհրաժեշտ գիտական ամսագրերի,մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ արդի գրականության<br>առկայությունը | | | | | |
| 12.Ինստիտուտի էլեկտրոնային կայքի տեղեկատվական հագեցվածությունը | | | | | |
| 13. Ինստիտուտում ինտերնետից օգտվելու հնարավորությունը | | | | | |
| 14.Թանգարան | | | | | |
| 15.Շախմատի լսարան | | | | | |
| 16.Ներառական լսարան | | | | | |
| 17.Ամբուլատորիա/բուժկետ | | | | | |
| 18.Մերսման լսարան | | | | | |

## 4.ԳՆԱՀԱՏԵ՛Ք ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՎՅԱԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

| | 1 | 2 | 3 | 4 | 99 |
|---|---|---|---|---|---|
| 1.ֆակուլտետ | | | | | |
| 2.Ուսումնական բաժին | | | | | |
| 3.Ամբիոններ | | | | | |
| 4.Որակի ապահովման բաժին | | | | | |
| 5.ՄՌԿ և ընդհանուր բաժին | | | | | |
| 6.Ընդհանուր բաժին | | | | | |
| 7.Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժին | | | | | |
| 8.Պրակտիկայի և կարիերայի բաժին | | | | | |
| 9.Ուսանողական գիտական ընկերություն | | | | | |
| 10.Ուսանողական խորհուրդ | | | | | |
| 11.Գրադարան | | | | | |
| 12.Համակարգչային լսարան | | | | | |
| 13.«Ֆիմա» մարզական ակումբ | | | | | |

## 5. ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՔ ԳՈՀ ՀՖԿՍՊԻ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

| | *1.Միանշանակ գոհ եմ* | *2.Ավելի շուտ գոհ եմ* | *3.Ավելի ժուր գոհ չեմ* | *4. գոհ չեմ* |
|---|---|---|---|---|
| 1. Որքանո՞վ եք գոհ հեռավար դասապրոցեսի կազմակերպմանը վերաբերող (դասացուցակ, հեռավար դասապրոցեսի մեկնարկ, քննությունների ժամանակացույց) տեղեկատվության տրամադրումից: | | | | |
| 2.Բնութագրերի տրամադրում | | | | |
| *3.*Ակադեմիական տեղեկագրի տրամադրում | | | | |
| 4. Որքանո՞վ եք գոհ դիմումների ընդունման համակարգից | | | | |
| **Որքանո՞վ եք գոհ լրացուցիչ խորհրդատվության տրամադրումից:** | | | | |
| 1.Անհատական հանդիպում ուսանողի հետ | | | | |
| 2.Կարողությունների զարգացման ծրագիր | | | | |
| 3.Կամավորական նախաձեռնություններ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.Օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ | | | | |
| Որքանո՞վ եք գոհ ոչ ֆորմալ կրթության հնարավորություններից/վարպետաց դասեր, վեբինարներ | | | | |

**6.Օգտվում ե՞ք արդյոք ՀՖԿՍՊԻ-ի ընթերցասրահից:**

*1.Հիմնականում օգտվում եմ* *3.Ավելի շուտ չեմ օգտվում*
*2.Ավելի շուտ օգտվում եմ* *4.Հիմնականում չեմ օգտվում*

**7. Արդյոք ինստիտուտը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:**
*1.Այո*
*2.Ոչ*
*3.Այլ*
**7.1. Մասնագիտական ի՞նչ գրականություն է պակասում:**

**8. Օգտվու՞մ եք ՀՖԿՍՊԻ-ի գրադարանից**

*1.Միանշանակ այո* *3.Հիմնականում ոչ*
*2.Հիմնականում այո* *4.Միանշանակ ոչ*

**9. Նշեք դասընթացներ, որոնք յուրացնելու համար գրադարանում առկա գրքերը շատ հին հրատարակությունների են**

**10. Ձեզ տրամադրվու՞մ է տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) և ինտերնետ հասանելիություն ունեցող լսարան/ընդգծել/**
*1.Միանշանակ այո* *3.Հիմնականում ոչ*
*2.Հիմնականում այո* *4.Միանշանակ ոչ*
*5.Այլ*

**11.Ի՞նչ առաջարկներ ունեք կապված ընթերցասրահի և գրադարանի հետ**

**12.Ինստիտուտի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ դժգոհություններ երբևէ ունեցել եք, ինչպե՞ս եք արտահայտել Ձեր բողոքները և առաջարկությունները** (նշել հնարավոր բոլոր բբերակները)

1. Տեղեկացնել դասախոսներին
2. Տեղեկացնել ամբիոնի վարիչին
3. Տեղեկացնել դեկաններին
4. Տեղեկացնել պրոռեկտորներին
5. Տեղեկացնել որակի ապահովման բաժնի ղեկավարին
6. Տեղեկացնել ուսանողական խորհուրդին
7. Տեղեկացնել ռեկտորին
8. Այլ _____

**13.Ինչպե՞ս են ուսանողները տեղեկանում ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին (կարող եք նշել մի քանի տարբերակ)**

1. Գիտական խորհրդի նիստերից
2. Ինստիտուտի պաշտոնական կայքից
3. Ուսանողական խորհրդի նիստերին մասնակցելով
4. Ինստիտուտի ֆեսբուքյան էջից
5. ԲՈՒՀ-ում փակցված հայտարարություններից
6. Զանգվածային լրատվամիջոցներից
7. Այլ

_____

**14. Ո՞ր բարեփոխումներն են տեսանելի Ձեզ համար**

_____

_____

**15. Ձեզ դասավանդող դասախոսները ուսանողներին տրամադրու՞մ են տեղեկություններ իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում իրենց գիտական հոդվածները, մենագրությունները)**

*1.Միանշանակ այո*
*2.Հիմնականում այո*
*3.Հիմնականում ոչ*
*4.Միանշանակ ոչ*
*5.Այլ*

_____

**16. Ի՞նչը կմոտիվացներ Ձեզ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար:**

_____

_____

_____

**17. Նշեք Ձեր առաջարկություններն ու դիտողությունները ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության բարելավման ուղղությամբ:**

**18.Արդյո՞ք հարցումը հնարավորություն տվեց արտահայտելու Ձեր կարծիքը Ինստիտուտի գործունեության վերաբերյալ**

*1.Միանշանակ այո*
*2.Հիմնականում այո*
*3.Հիմնականում ոչ*
*4.Միանշանակ ոչ*